ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

,_____ե _____ 2010թ. N_____Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, 11-րդ հոդվածի 3-րդ կետով, 12-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը (կցվում է):

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգին համապատասխան ստեղծել <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդ և իրականացնել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ------

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

--- .--- . 2010թ. թիվ ------- Ա

որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Գ. Բեգլարյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ----------
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

Գրանցման N ----------

Վկայական N ----------

Թիվ ------ փոփոխությունը գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի ----------

տարածքային բաժնի կողմից՝

<<--- >> -------- 2010թ.

---------- Տ/Բ պետ՝

_____

<<ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կանոնադրության 3-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Երևանի քաղաքապետը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ Խորհուրդը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Երևանի քաղաքապետը, Խորհուրդը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3 Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ը) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

3.4 Կազմակերպության հիմնադիրը սույն կանոնադրության 3.3 կետի <<գ>>, <<դ>>, <<ե>>, և <<է>> ենթակետերով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել Երևանի քաղաքապետին, իսկ Տնօրենի նշանակման լիազորությունը՝ նաև Խորհրդին:

3.5 Երևանի քաղաքապետն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Երևանի քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է Խորհուրդը և նշանակում Տնօրենին, վաղաժամկետ դադարեցնում է Խորհրդի անդամների, Տնօրենի լիազորությունները, սահմանում Տնօրենի աշխատավարձի և Խորհրդի անդամների պարգևատրման չափերը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Տնօրենի կամ Խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Խորհրդի աշխատակարգը,

ը) իրականացնում է օրենքով և Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.6 Խորհուրդը բաղկացած է 8 անդամից, որոնցից երկուսն ընտրվում են Կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի անդամների թվից՝ նրանց

ինքնակառավարման մարմնի (կամ աշխատանքային կոլեկտիվի) ընդհանուր ժողովի որոշմամբ, իսկ մնացած վեցը նշանակվում են Երևանի քաղաքապետի կողմից՝ այդ մարմնի պաշտոնատար անձանց (աշխատողների), ստեղծագործական, հասարակական բնագավառների այլ կազմակերպությունների աշխատողների (ներկայացուցիչների, անդամների), ինչպես նաև այդ բնագավառների և հասարակական գործիչների թվից:

3.7 Խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Տնօրենը չի կարող լինել Խորհրդի անդամ և կարող է Խորհրդի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

3.8 Խորհրդի նախագահի և անդամների աշխատանքը չի վարձատրվում, Երևանի քաղաքապետի որոշմամբ նրանք կարող են միայն տարեկան մեկ անգամ պարգևատրվել Կազմակերպության առևտրային գործունեության արդյունքում ստացված շահույթի ոչ ավելի, քան 10% գումարի հաշվին:

3.9 Կազմակերպության Խորհրդի լիազորություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկությունների ներկայացումը լիազորված համայնքային կառավարման մարմնին.

բ) Տնօրենի նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը.

գ) հիմնադրի կողմից սահմանված կարգով Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը,

դ) Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ե) իր աշխատակարգի մշակումը և Երևանի քաղաքապետի հաստատման ներկայացումը.

զ) Խորհրդի ղեկավարի ընտրությունը.

է) սահմանված կարգով Երևանի քաղաքապետին Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

ը) Կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը,

թ) Տնօրենի հաշվետվությունների քննարկումը և հաստատումը,

ժ) Կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը,

ժա) օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

3.10 Խորհրդին չեն կարող վերապահվել կազմակերպության հիմնադրի, Երևանի քաղաքապետի կամ Տնօրենի լիազորությունները, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

3.11 Խորհրդի հերթական նիստերը գումարվում են որ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

3.12 Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված Երևանի քաղաքապետի, Տնօրենի, Խորհրդի անդամների ոչ պակաս, քան մեկ երրորդի պահանջով: Խորհրդի անդամների ոչ պակաս, քան մեկ երրորդի պահանջով Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամակետում և կարգով:

3.13 Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երեք քառորդը:

3.14 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

3.15 Խորհրդի նիստերն արձանագրվում են:

3.16 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարեցնում է) Երևանի քաղաքապետը:

3.17 Տնօրենը օրենքով, Հիմնադրի, Երևանի քաղաքապետի և Խորհրդի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական և այլ ակտերի, Հիմնադրի, Երևանի քաղաքապետի որոշումների կամ Խորհրդի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

3.18 Տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Երևանի քաղաքապետը: Պայմանագրում սահմանվում են Տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները Երևանի քաղաքապետի ու Խորհրդի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ սույն օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.19 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.20 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3.21 Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելիս համայնքային լիազորված մարմնի ղեկավարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից Կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով Կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար համայնքային լիազորված մարմնի ղեկավարը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

3.22 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, Երևանի քաղաքապետի, Խորհրդի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.23. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում համայնքային լիազորված մարմնի ղեկավարի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

3.34. Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն:

3.35 Տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

3.36. Տնօրենի պաշտոնում անձի լիազորությունները դադարեցվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ կամ առաջ են եկել սույն կանոնադրության 39-րդ կետով նախատեսված հանգամանքները.

է) նա իր գործառույթներն իրականացնելիս Կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

ժա) դատական կարգով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

ժբ) Կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

ժգ) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

3.37 Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Երևանի քաղաքապետի, Խորհրդի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

3.38. Կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման համար, ստեղծագործական և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով Տնօրենին կից ստեղծվում են գիտական խորհուրդ, գիտամեթոդական խորհուրդ՝ խորհրդական ձայնի իրավունքով և ֆոնդային գնահատման հանձնաժողով/ վերջիններս կազմվում են տնօրենի հրամանով /:

3.39. Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են կազմակերպության տնօրենը /նախագահ/, տնօրենի տեղակալը, գիտական քարտուղարը, ինչպես նաև ստորաբաժանումների ղեկավարները: Խորհրդի անդամ կարող են լինել նաև մասնագետներ, գրադարանների, գիտահետազոտական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3.40. Գիտական խորհրդի կազմը և լիազորությունները, լիազորված համայքային մարմնի հետ համաձայնեցնելով, հաստատում է կազմակերպության տնօրենը:

3.41. Գիտական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում քննարկում է թանգարանի գործունեությանն առնչվող հարցեր, թանգարանի

գործունեության տարեկան և ընթացիկ ծրագրերն ու դրանց կատարման հաշվետվությունները:

Սույն կանոնադրությունը հանդիսանում է _____թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ հիմնադրի որոշմամբ կամ պետական (համայքային) ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն իրականացնող և (կամ) այլ մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում:

Հաշվի առնելով <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության առանձնահատկությունը՝ նպատակահարմար է նշված կազմակերպության կառավարումն իրականացնել նաև կոլեգիալ մարմնի՝ խորհրդի կողմից՝ այն նախատեսելով տվյալ կազմակերպության կանոնադրությամբ:

Վերոգրյալ հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

<<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի ավագանու որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ